

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՒՈԼԻՒՑԻԱՆ

ՄԻՔԱՅԵԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

(Շաբուհակութիւն<sup>1)</sup>)

Այսուամենայիւ մարդս իբրև կենդանի՝ որոշ չափով ենթակայ է միշտ կոսմիկական (=պիեզերական) միջավայրի ազդեցութեան։ Նա բոլոր կենդանիներից ամենայարմարւողն է։ Նա յարմարւում է, կուիւ մշելով թէ բնութեան դէմ և թէ իր նմանների դէմ։ Մարդկութիւնը բացարձակապէս չի կարող զարւել անասնութիւնից։ Հասարակական շարու նշանաւոր երեսյթներ իրենց արմագն ունին անասունների կեանքում։ արդէն մարդկանց հասարակական ընազդը մի ժառանգութիւն է իրենց անասնական պապերից։ Սոցիոլոգիայի երկու հիմնական, սարգ և ամենասորորին պաշտօնները՝ սննդառութիւնն ու սերումը ընդհանուր են ամբողջ կենդանի աշխարհի համար։ Թէ սոցիոլոգիական և թէ բիոլոգիական էւոլիցիալի մէջ պաշտօնների աճող դարբերականութեան հետ զուգհնեռաբար ընթանում է օրգանների աճող դարբերականութիւնը (Դիֆֆէրենցիալ)։ Մարդկային նախնական հասարակութիւնը իր համասեռութեամբ նման է ամենասորորին կենդանիների կազմւածքներին, իսկ բարձր, քաղաքակրթւած հասարակութիւնները իրենց այլասեռութեամբ (հետերոմիքն) յիշեցնում են բարձրագոյն կենդանական մարմինները։

1) Տես Մուրճ 1899, № 2—3.

Սոցիոլոգիան բիոլոգիայի բնական շարունակութիւնն է. բայց այդ չի նշանակում, որ սոցիալական էւոլյուցիան պիտի լուսաբանուի բիոլոգիական օրէնքներով. այդուղիւ է հիմնական բարբերութիւնը Մարքսի վարդապետութեան և ամբողջ «բիոլոգիական ուղղութեան» միջև։ Առաջինի համար սոցիոլոգիան չոկ, ինքնուրոյն մի գիրութիւն է իր յարուկ օրէնքներով. երկրորդի համար՝ նա բիոլոգիայի ճիւղն է միայն, ուր պէտք է կիրառնել նոյն բիոլոգիական զարգացման օրէնքները՝ գոյութեան կուր, բնական լնուրութիւն և այլն։ Բայց այդ ֆակտորների առթիւ ևս մենք նոյնը կ'ասենք, ինչ որ ասացինք ընդհանուրապէս աշխարհագրական, կիմայական և այլն պայմանների աղդեցութեան մասին։ Գոյութեան կուրը բիոլոգիական մոքով թագաւորում է զլխաւորապէս նախնական հասարակութիւնների կամ այսպէս կոչւած՝ ընական ժողովուրդների մէջ (Naturvölker)։ Քաղաքակրթութեան զարգացման ընթացքում նրա էութիւնը մեծապէս փոփոխուում է, նրան հակադրում է ընկերակցութեան (ասսոցիացիայի) բնազդը, որը անսառուններից ժառանգւելով՝ հզօրապէս շեշտում է մարդկային հասարակական կեանքում, մանաւանդ նրա էւոլյուցիայի վերջին շրջանների մէջ։ Դիպեցէք հասարակական կեանքը ժամանակակից եւրոպայում. այդուղիւ դուք կը դեմք գոյութեան պայքար դասակարգային հակամարդութեան ձեռվ. բայց ինչի՞ց է առաջանում այդ պայքարը և ինչ հետեանք է ունենում. նա չի առաջանում ապրուստի միջոցների պակասութիւնից ինչպէս այդ դիպում է կենդանների աշխարհում—ոչ. Քաղաքակիրթ հասարակութիւնների մէջ—որպէս իրաւամբ նկատում է մի գնդեսագէտ—ծայրացնդ թշշառութիւնը առաջանում է հէնց ծայրացնդ առարտութիւննից. ապրուստի միջոցները առափ են, բայց նրանց բաշխումը անհաւասար է. նրանք կենդրոնացած են փոքրամասնութեան ձեռքում,—ահա պարզաբար դասակարգային պայքարի։ Ուրեմն՝ զուր սոցիոլոգիական պարմառ։ Բայց այդ պայքարի հետեանքը ևս այն չէ, ինչ որ սովորաբար դեմքում ենք անսառունների մէջ։ Այնպէս լաղթաճները անդունդ են գնում, ոչնչանում են, իսկ այսպես, մարդկութեան մէջ, այդ յաղթաճները (մեծամասնութիւնը, աշխարհաւոր դասակարգը) ձեռք ձեռքի բալով՝ համախմբուում են և մի վիթիսարի բանակ են կազմում ապա-

գան նւաճելու համար. այն ինչ՝ իշխողների թիւը հետզհետէ նւազում է:

Գոյութեան պայքարը, ուրեմն, իր պարմառներով ու հետեանքներով այլ բան է անասունների մէջ և այլ է մարդկութեան կեանքում: Ընկերականութիւնը (sociabilité), այլասիրութեան բնագլը, թողլինինա արդիւնք կենսական կութ—մի հզօր գործոն է հասարակական էւոլյոցիալի մէջ, աւելի հզօր, քան իր հակորնեայն: Մենք ցոյց կը պանք, թէ ինչպէս դարւինական Struggle for life-ը (գոյութեան կոիւ) որ այնքան փառաբանում են դարւինիսու սոցիոլոգները ձաւ կիրար, իբրև յաւիրենական ու էապէս անփոփոխելի մի օրէնք,—հետզհետէ կերպարանափոխւթիւնով, յանուն իսկ մարդկացին ցեղի յարագեռութեան, պիտի վերածւի մի հսկայական ընկերականութեան՝ խաղաղ, արդիւնաբերող՝ ուր կը սահմանւի կենսական բարիքների հաւասար ու արդար բաշխումն և ուր կ'ոչնչանան դասակարգացին ու անհարական ամեն գեսակ առանձնաշնորհումներ<sup>1</sup>):

Ահա սոցիալական էւոլյոցիալի մարքսիստական ըմբռնումը:

Մարքսը իր մնարեսական թէօրիայով դրեց սոցիալական գիրութիւնը հասարարուն խարիսխի վրայ: Հասարակութեան զարգացման օրէնքը նա փոխ առաւ ոչ բնագիտութիւնից, այլ հասարակական երկոյթների աշխարհից: Բիոլոգիալի կամ ասորշաբաշխութեան օրէնքներով երբէք չենք կարող լուսաբանել ժողովուրդների մասսացին հոգեբանութիւնը, ընդունիքի, բարոյականութեան, իրաւունքի, սեփականութեան էւոլյոցիան, պարմական մեծ յեղաշըրջումները, սոցիալական հպատակութեան յաջորդական ֆախները (սպրուկ, ճորպի, պրոլետար) և այլն և այլն. մինչդեռ գնակեսական օրէնքի վրայ յենաւելով՝ կարող ենք գոհացուցիչ բացարրութիւն բար այդ բազմազան երկոյթներին:

<sup>1</sup>) Ըստ մեզ, հակապարմական է (ուրեմն և ուրուպիական և հակագիրական) այն բեսութիւնը, որի համեմատ դոլութեան կուփ օրէնքը, իւր ընդարձակ ըմբռնումով, իբր թէ հնարաւոր է իսպառ վերացնել մարդկալին կեանքում: Ինչպէս որ մի այլ անգամ՝ ասել ենք (Պ. Մուրճ 1895 № 6 էջ 805 ծանօթութիւն) «մինք կարող ենք այդ կոիւը հասարակական կեանքում միշտ աւելի ու աւելի բարձր պատւանդանների վրայ դնել»: և այդ պատւանդանների բարձրութիւնները պարմական ալ և այլ ըըրջաններում ցոյց կը դան թէ որ շրջանը աւելի քաղաքակիրթն է եղելու:

Տնդէսական այդ օրէնքը այն առաւելութիւնն ևս ունի, որ նա հիմնական և ընդհանուր է բոլոր մարդկային հասարակութիւնների համար: Կրօնը, բարոյականութիւնը, ալորութափական (այլաստիրական), մարդասիրական զգացումները, որոնք շատերի կարծիքով կառավարում են հասարակական կեանքը, ոչ հիմնական են և ո: ընդհանուր, համաշխարհային: Ախորժակները կառավարում են մեղ աւելի քան գաղափարներն ու զգացումները: Մի կարգ վայրենի ցեղեր շատ քնքոց զգացումներ են դաձում դէպի իրենց զաւակները, այնուամենայնիւ մորթուում են նրանց, որովհետու գնդեսական անհրաժեշտութիւնը ացտպիս է հրամայում<sup>1)</sup>: Մեր ուղեղը չէ, որ զեկավարում է մեր վարք ու բարքը, ոչ մեր սրամոքսը. սրամոքսի ճիչը խլացնում է մեր մէջ ամեն լաւ բնազդ: Ոչինչ չի կարող ընդդիմանալ նրան. նրա առջեւ իսրալում են բարւոյ ու չարի հասկացողութիւնները և ամենաամուր քաղաքական հասպարութիւնները:

## Ը Ն Տ Ա Ն Ի Ք

Թէօրիաներից անցնենք ֆաքտերին: Նախ ուրւագրենք ընդհանուր գծերով մարդկային ընդանիքի աստիճանական զարգացումը: Պէտք է անցնել պատմութեան շեմքից, իջնել նախապարմութեան այն մութ, անցիշատակ ժամանակները, երբ մարդը չունէր գիր, պարմութիւն, քաղաքակրթութիւն, երբ նա և՛ մարդ էր և՛ անասուն միաժամանակ: Սակայն ի՞նչոյն ուսումնասիրել մարդկութեան այդ նախավիճակը, ինչպէս ճանաչել այն ժամանակների հասարակական ընդանեկան կազմակերպութիւնը: Ուղղակի մենք այդ չենք կարող անել. անցեալն անցել է անդառնալի կերպով և առանց զրաւոր յիշարակներ կրակելու: Փորձենք ծանօթանալ անուղղակի կերպով: Փոխանակ ժամանակի մէջ բեղափուելու՝ կարող ենք սեղափուել դարածութեան մէջ: Ամեն ոք դիմէ, որ այսօր կան դակաւին վայրենի ցեղեր ցիր ու ցան Աֆրիկայի, Ասորալիայի, Ասիայի ու Ամերիկայի կուսական վայրերում: Ֆիւլչիներ, Բուշմեններ, Վե-

<sup>1)</sup> Ուրեմն խելքը ինչացողւ է: Նոյն խոկ վայրենին մորթում է զաւակին, երբ դեսնում է որ վերջինս սովոր մեռնելու է. հետեապէս ինքը երկու չարիքից վոքրադոչնն է ընդրում: Աշտ և էետագակ մի քանի դուերին մենք չենք պարտաւորում:

դաներ, Հոգորենոգորներ, Պապուամներ և այլն—մարդկացին սեռի ամենասփորին տիպարներն են ներկայացնում Դրանք և, կարելի է ասել, ընդհանուր կերպով վերաբրտադրում են նախնական մարդկութիւնը։ Մեծ մասամբ զուրկ արդիւնաբերական գործիքներից՝ ապրում են նրանք թուշուների պէս ազատ բնութեան մէջ, կերպարում են բնութեան շնորհած բարիքներով։ Անամսական կեպնք. ոչ մի հասարակական կամ քաղաքական կազմակերպութիւն։ Ֆիւլէջիների մէջ (Հարաւային Ամերիկա), մանապարհորդների վկայութեամբ, հազարակութեան ոչ մի հետք չկայ. ոչ տէր, ոչ սորուկ, ոչ կասուա. անիշխանական հորդաներ են Դրանք, որ մնունդի պահանջների համեմատ շարունակ չեւում են մի գեղից միւսը։ Բուշմենները ևս (Աֆրիկա) 8—10 հոգուց բաղկացած հորդաներով թափառում են անդառներում։ Նրանց կերակուրը կազմում են արմագներն ու միջարները. քնում են բաց օդի մէջ, կամ գերինի վրայ կամ թէ ծառերի խոռոչներում։ Նրանք հազիւ են զանազանում անամսական հորդաներից։ Հետաքրքրական է մանաւանդ հարաւային Ամերիկայում՝ համեմարտաբար նորերս գտնւած Գւարիբոսների հորդան։ Գւարիբոսները բոլորովին մերկ են, չունին աշխարանքի գործիներ ու բնակութիւն, կերակրում են խոշոր որշներով, որ եղունգներով հանում են գեղնի գակից, և արմաւենիների ծիլերով ու պառզներով<sup>1)</sup> (Letourneau, Evolution politique):

<sup>1)</sup> Հէնց աւա օրերս առիթ ունեցանք գունենել ժընեռում նախամարդու մէկ նմուշը, որը մի խումբ անդրտպուզների ձեռքով գերի է վեցցւած Հիմալայեան լեռների ոտորոփներում գտնւու մի քարանձաւից և որին պղորեցնում են աւսօր Եւրոպակի բոլոր ծալիքրում, որպէս զի քաղաքակըրթութեան գագաթին կանգնած ժողովուրդները աշդ կոնկրետ օրինակի դիմաց վիշն իրենց անամսական ծագումը։ Ռամա-Սաման (ալսպէս է տարօրինակ մարդ-գաղանի անոնքը) որից զգլուխ ծածկած է թանձր ու երկարն ըրդով, որը կարարելապէս աչծի բուրդն է լիշեցնում Խիր ու ահազին երկանութեան մազերը մշրապէս ծածկում են նրա դէմքը. աչքերը չեն հանդուրժում արեի լուսին, նա բացարձակ բուսակեր է, զարշում է մոելէնից. Լաւ լսելիք ունի, սակաէն ամենեին չի խօսում, ալլ մի այն անորոշ հնչմաններ է արձակում. Նա լիշեցնում է մեզ Հէկկելի ենթադրական Homo Alalus-ը... Ի՞նչ կ'ասեն այս գիտակ Փաքրերի դիմաց Պարագնիզմի դէմ լար և միշտ բարբանչու թէոլոգն'րը... Վերջերս Պար-

Վայրենիները կամ բնական ժողովուրդները իրենց այդ կէսանասնական կինցաղով մօգաւոր գալափար են գալիս մեզ նախնական մարդկութեան մասին։ Վայրենիներին ուսումնասիրում է սոցիոլոգիայի այն ճիւղը, որ կոչում է համեմատական ցեղագրութիւն (էպոդրաֆիա)։ Այդ գիտութիւնն է, որ լոյս է սփռում նախապարմութեան վրայ, Մորգան, Տայլոր, Ռեկլի՛, Լեօբրուկ Պրիշար, Միւլլէր և այլն մի մեծ շարք փայլուն հեղինակութիւններ իրենց ընդարձակ հետազօտութիւններով հարստացրին նրան։ Առանձին ուշադրութիւն են գրաւել ամերիկացի Մորգանի ուսումնասիրութիւնները (L. Morgan, Ancient Society, 1877)։ Նա ընդում է մարդկութեան նախապարմութեան մէջ երկու գլխաւոր շրջաններ՝ վայրենութեան և բարբարոսութեան, որոնցից իւրաքանչիւրը ունի իր սորորաբաժանումները։

Վայրենութեան շրջանում, նրա ամենասորին աստիճանի վրայ, մարդս իւրացնում է բնութեան պարրասփի բերքերը մօգաւորապէս անասունների նման։ Նա ապրում է անդառներում, ծառաերի վրայ, քարանձաւնների մէջ, ալյաստանելով այնորեղ գիշապիչ

ւինի քաջամարտիկ ախուեանների շարքին աւելացել են Վիեննակի ու Վենետիկի մեր հայրերը։ և այդ այն օրից, երբ մի հայ դարւինական գանդրգնեց զետեղել «Մուրճում» մի քանի չօդածներ բնական սորեղագործութեան և էտոլիւցիակի մասին։ Արդովւած աղարակեցին հակական թէօլոգները: «Հանդէս Ամսօրեաբն հայնոցց մեզ, իսկ Վենետիկում հայր Սիմօն Նրեմեան մի բրօշիւր իսկ հրադարակեց «Դարւինականութիւն» խորագրով ընդդէմ արդի ազգային գարւինականաց, որոնք ռամկին կ'ուզեն համոզել իրբն թէ այդ (Դարւինականութիւնը) ապացուցեալ ճշմարտութիւնն մըլլացր-Դարւինին և աշխարհահռչակ դարւինիստ գիտնականներին (Ֆոլտո, Հեկ-կէլ և ալլն) ոչնչացնելուց չեղո՞ւ նա մեզ ևս արժանացնում է իր «գիտական» քննադարութեան—և, ի վերջո, ահաւասիկ հայ ասուածաբան փիլիսոփակի «գիտական» եղրակացութիւնը։ «Մարդուս ծագումն, իր գերագանց բնութիւնն, իր արարչութեան մէջ գրաւած ոեղն, իր բարուական և ընկերական պարտքերն, անդրգերեզմանական վախճանը—անդրգերեզմանական վախճանը!—զմի՞զ շատ իսկ կը համոզեն, ուշակի սրեշտան վարդապետութեան բանաւոր լինելուն»... Հայ կշերը աւելին էլ չի կարու սովորել իր եւրոպացի ուսուցիչներից։ միշտ պնդել, և երբէք—պատճառաբաննել:

գազաններից. կերակրում է պառողներով, արհապներով, իսկ աւելի ուշ՝ ձկներով, որսի թռչուններով և այլն։ Վայրենութեան միջն ասրիծանի վրայ գրնուում է կը ակը. որսորդութիւնը գլխաւոր պարապմունքն է, ներ ու աղելլը գործածութեան մէջ են. կան ուրիշ գործիքներ ևս քարից շինւած. մեփաղներ տակաւին չը կան։ Մարդաբիրութիւնը պարածւած է։ Այդ շրջանի մէջ են այսօր Աւարամացիք, մասամբ հիւսիացին Ամերիկացի Հնդիկները և շար ուրիշ վայրենի ցեղեր։

Բարձարոսութեան շրջանում գործիները զարգանում են. երեան է գալիս կաւագործութիւնը։ Մարդիկ սկսում են ընդուանեցնել կենդանիներին և երկրադրծութեամբ սպարապել։ Մեփաղները գործածութեան մէջ են մգնում։ Այդ շրջանի վերջում—անցողական ասրիծանի վրայ Դէպի քաղաքակրթութիւնը—սկիզբ է առնում ճարպարապետութիւնը և արւեստը<sup>1)</sup>։

Պատիկերը անշուշտ փիւսում է՝ համեմատ աշխարհագրական դիրքին. անասնապահութիւնը, երկրագործութիւնը, մեփաղների գործածութիւնը և այլն մի տեղ աւելի վաղ են զարգացել, միւս տեղ աւելի ուշ, նայած միջավայրին, նպաստաւոր կամ աննպաստ պայմաններին։ Մորգանի բաժանումները իրականութեան ճշդրիք արդայացութիւնը չեն կարող լինել, սակայն նրանք դիւրացնում են նախապարմութեան ուսումնասիրութիւնը։

Դառնանք այժմ ընդանիքի ծագման։ Էթնոգրաֆիան վաղուց ի վեր առաջացրել էր մի կարևոր հարց. ո՞րն է արդեօք հնագոյն՝ ընդանիքը թէ հասարակութիւնը։ Մէկ կարծիք, հիմնելով գլխաւորապէս հին կրակարանի վկացութեան վրայ, պնդում էր, որ անհարը և ընդանիքը աւելի առաջ են եղել, քան հասարակութիւնը։ Առաջին անհարը երկաւորւել է՝ արուի ու էղի, և այդ առաջին զոյգից ծնել է առաջին ընտանիքը, որը բազմանալով պւել է ցեղեր, ազգութիւններ, մարդկութիւն։ Այդ թէօրիան արդէն առասպելների շարքն է անցած։ Մարդիկ միշտ ապրել են հասարակութիւններով։ Առաջին անհարը երկաւայական է. էթնոգրաֆիական հերազօրութիւնը երբէք չը հանդիպեց կղզիացած մարդ—նորին-

<sup>1)</sup> Engels, Ursprung der Familie.

զոնին։ Հարկադրւած իրենց անասնական նախնիքների պէս կեանքի դժնդակ պայքարը մշելու՝ մարդիկ ի սկզբանէ համախմբւել են մեծ ու փոքր հորդաներով։ Այդ ձևով էլ սկիզբ է առել մարդկութիւնը։ Հորդան առաջագոյն է. ընդանիքը, զուգաւոր ամուսնութիւնը յետագայ երեսովթներ են, դարաւոր էւոլիւցիայի արդիւնք։

Ամուսնութիւնը, նրա հեր և ընդանեկան պատկերը, ժողովուրդների էւոլիւցիայի ընթացքում ընդունել են պէս պէս ձևեր, որոնք նւիրագործւել են ժամանակաւորապէս պիրող սովորութիւններով։ Ամուսնութեան չորս ձևերն են՝ խառնակեցութիւն (promiscuité), բազմակնութիւն, բազմացրութիւն (polyandrie) և միակնութիւն։ Այդ ձևերը մենք գիտում ենք նաև կենդանիների մէջ։ Ամուսնութեան նպատակն է՝ սերումն, փեսակի յարագեութիւն։ Բոլոր կենդանի էակների առաջին էական օրէնքն է—յարագեել։

Խառնակեցութիւնը, կամ սեռական անկանոն յարաբերութիւնները, ըստ Լեբուրնօ'ի դիմուում են կաթնասունների և մի քանի թռչունների մէջ։ բայց թռչունները, նոյն հեղինակի կարծիքով, մեծ մասամբ միակին են, և ընդանեկան կապը այնպել աւելի ամուր է, քան թէ շատ մարդկային հասարակութիւնների մէջ։ Կապիկների մէջ թագաւորում է թէ միակնութիւնը և թէ բազմակնութիւնը։ Ընդանեկան բնագրը վերին ասպիճանի զարգացած է, ինչպէս յայտնի է, մրջիւնների ու մելունների մէջ։ այնորեղ նա նոյնանում է հասարակական բնագրին։ Այդ փոքրիկ արարածների աշխարհում հազարէս անձնազոնութեան օրինակներ են փեսնւած։ մեշտանցում էզի (թագուհու) մահը ընդհանուր սուդ է պատճառում հասարակութեան բոլոր անդամներին։ վերջիններս յաճախ չեն կարողանում դրանել կորուստը, մեռնում են, — մեշտացին հանրապետութիւնը քայքայւում է<sup>1)</sup>։

Բախովէլն, Մորգան, Էլիզէ Ռեկլի<sup>2)</sup>, Լեօբրուկ և շատ ուրիշ գիտականներ հակւած են կարծելու, որ մարդկութեան էւոլիւցիայի մէջ ամուսնական յարաբերութիւնների առաջին շրջանը կազմել է

1) Letourneau, Evolution du mariage.

բացարձակ խառնավեցութիւնը։ Բոլոր դղամարդիկ ապրել են բազմակնութեան մէջ, բոլոր կանայք—բազմալրութեան մէջ։ Ելիդէ Ռէկլիւ<sup>1)</sup> և Լէօբրոկ<sup>2)</sup> հիմնւում են այն ենթադրութեան վրայ, որ նախնական վիճակում մարդիկ չեն ճանաչել մասնաւոր սեփականութիւնը. սմեն սեփականութիւն ընդհանուր, համայնական է եղել, կանայք ևս ուրեմն հղել են համայնական։

Կանանց այդ համայնացման շրջանում բնականաբար խօսք չէր կարող լինել երկու սեռերի փոխադարձ սիրոց և յարգանքի սասին։ Ընդունիքը բացակայում էր։ Այնդեղ, ուր ամուսնութիւնները պատահական ու վաղանցուկ են՝ հիմնւած սոսկ անասնական բնազդի վրայ՝ այնպեղ չի կարող լինել ընդունիքի գաղափար, որը առաջանում է երկու սեռերի շափ թէ քիչ տեսական յարաբերութիւններից։ Ընդհանուր խառնավեցութիւն՝ առանց խորութեան դրսիքի և ազգակցութեան, մայրը որդու հետ էր միանում, քոյրը եղօր հետո։ Խառնակեցութիւնը բարածւած էր, Սորաբոնի վկայութեամբ, հին արաբների մէջ։ Կելլիքը ևս հրապարակօրէն միանում էին ամեն կնոջ հետ, նոյն խոկ իրենց մայրերի ու քոյրերի հետ։ Խառնակեցութիւնը կանոն է եղել Խուսիայում, զապարսժեան կողակների մի քանի ցեղերի մէջ (Լեզուրնո)։

Սեռուկան յարաբերութիւնների այդ նախնական շրջանում՝ մարդը գազան է և աւելի ոչինչ։ Մենք արդէն մեր անցեալ յօդւածներով զոյց ենք ուել, որ նախամարդը շափ հեռու է Ասրուծոց պատկերից, որ նա իր ֆիզիկական ու հոգեկան կարողութիւններով բնական շարունակութիւնն է անասնական գեսակների։ Խառնակեցութեան վիճակում ամօթխածութեան, ոլջախորութեան, խանդուպութեան զգացմունք մի փնորէք. թռչունները անհունապէս բարձր են նախամարդուց։ Այօր դեռ շափ վայրենիների մէջ կինը իրը ապրանք է դիտում. ևէրս բառը չկայ նրանց լեզուի մէջ, որովհետեւ սիրոց հետքը չկայ։ Կինը վաճառւում, յափշտակում է. նա նոյնանում է տնային անասունին. նրա կեանքի ու

<sup>1)</sup> Elisée Réclus, Les Primitifs.

<sup>2)</sup> Lübeck, Origines de la Civilisation.

մահու իրաւունքը վողամարդուն է վերապահած — իրաւունք ծեծելու, սպանելու, ուտիելու...

Քաղաքակիրթ կոչւածներս զգւանք ենք զգում, արձանագրելով նախնական մարդկութեան այդ սեռական անարխիան, բայց շատ էլ չզարմանանք. այսօրւայ բուրժուական աշխարհում թագաւորող երկու սեռերի անսանձ պրոսփիլուցիան մի դարձ է դէպի մարդկութեան հեռաւոր անցեալը:

Խառնակեցութեան վաղեմի ժամանակներն են ցիշեցնում մի քանի հետաքրքրաշարժ երևոյթներ, որոք դիպում են հին ու նոր վայրենի ու կիսավայրենի ժողովուրդների մէջ: Օրինակ, 1) Սրբազնն ալրոստիտուցիան: Կրօնը նւիրագործում էր այդ սարօրինակ սովորութիւնը: Բաբելոնում ամեն մի կոյս ալջիկ պարաւոր էր գոնէ մէկ անգամ ուխտ գնալ Միլիոնա Աստւածուհու գոանարը և այնքեղ մի տղամարդ ընտրելով՝ խախրել իր կուսութիւնը: Նոյն սովորութիւնը եղել է հին Հայաստանում, ուր, Սորաբոնի ասելով, հայ ալջիկների սրբազն պրոսփիլուցիան կապարւում էր Անահիտի գոանարում, ի պատիւ Անահիտի<sup>1)</sup>: Նոյնը եղել է Եգիպտոսում, Ասորեսպանում, Փիւնիկիայում և այլն:

2) Երկրորդ ուշագրաւ երևոյթն է, այսպէս անւանւած՝ Առաջին գիշերայ իրաւունքը (Jus prima noctis), ըստ որում ամեն մի նորապասկ կին, նախ քան իր ամուսնուն պարկանելը, պէսք է յանձնուէր մի քանի ուրիշ տղամարդկանց, որոնք կարող էին լինել կամ ազգական, կամ քաղաքացի: Վայրենի Կաֆրների մօս և նոր Զելանդիայում մինչև վերջին ժամանակներս ամեն մի գեղեցիկ օրիորդ պէսք է նախ պարկանէր ցեղի առաջնորդին: Մենոյն սովորութիւնը եղել է միջին դարերի Փէօդալական Եւրոպայում, ուր ճորուագէրը, երբեմն նաև հոգևոր հայրը, իրենց էին վերապահում ամուսնութեան առաջին գիշերւայ իրաւունքը:

Ուակայն խառնակեցութիւնը, իբրև մարդկաթեան նախնական վիճակ, իբրև համաշխարհային, համապարհում երևոյթ չեն ընդու-

<sup>1)</sup> Letourneau, Evol. du mariage.

նում շար ուրիշ սոցիոլոգիներ, օրինակ Սպենսեր, Լեպուրնօ, Շրարկէ, Վիստերմակ և այլն: Սպենսերը հականառելով Լէօբրովին, որը հեղուցնում է կանանց համայնացումը նախնական հասարակութիւնների մէջ մասնաւոր սեփականութեան բացակայութիւնից—յայդնում է, որ մասնաւոր սեփականութիւնը եղել է նոյն իսկ վայրենութեան որսորդական շրջանում (ուր ամեն մէկը զէնք էր պարագասպում), որ այդ մասնաւոր սեփականութեան դաշտափարը գոյութիւն ունի կենդանիների մէջ անգամ, և, ենթադրում է Սպենսերը, մարդկութեան սկզբնական շրջանում կանանց համայնացումը բացարձակ չէ եղել, այլ եղել է բարեխառնւած (mitigé) շար թէ քիչ գեւական ամուսնական կապերով<sup>1)</sup>: Լեպուրնօն նոյնպէս ժընդում է խառնակեցութեան (ուրեմն և կանանց համայնացման) բացարձակ ու համաշխարհային լինելը, հիմնելով գլխաւորապէս այն իրողութեան վրայ՝ որ մեր ամենամերձաւոր անասնական պապերին բարձր կապիկների մէջ այդ երեսովը բացակայում է: Սպենսերը և Լեպուրնօն ընդունում են մասնակի խառնակեցութիւն, բայց ոչ ընդհանուր ու համապարած. Բախօֆէն, Մորգան և այլք պնդում են հակառակը: Խնդիրը մնում է վիճելի:

Մորգանը յայրաբարում է, որ ընդհանուր խառնակեցութեան դրութիւնից զարգացել է աստիճանաբար մի աւելի բարձր հասարակական դրութիւն, որ նա անւանում է արինակցական ընտանիք: Այսուղ արդէն պասկւող գրուպպաները ջոկւում են սերունդներով (պորբերով), միենոյն ընդանիքի սահմաններում իրար հետ ամուսնանալ կարող են պատերն ու սիափերը, հայրերն ու մայրերը, ապա սրանց էգ ու արու զաւակները և այլն. այս սիափէմի մէջ ծնողը իր որդու հետ ամուսնանալ չի կարող, բայց ամուսնանում են քոյր ու եղբայր, հօրեղբօրորդի և հօրեղբօրալջիկ: Արինակցական այդ ընդանիքը գոյութիւն ունի այսօր Հաւայում և ուրիշ աւագրալիական կլզիների վրայ<sup>2)</sup>:

Զարդանում է երրորդ ֆազիսը (շրջան) ամուսնական յարաբերութիւնների մէջ. նրա անունն է՝ պղնալուա-ընտանիք: Մի քայլ ևս դժ-

<sup>1)</sup> Spencer, Principes de Sociologie.

<sup>2)</sup> Engels, Ursprung der Familie.

պի առաջ։ Քոյր և եղբայրնոյնպէս արտաքւում են սեռական յարաբերութիւններից։ Մի քանի գլամարդիկ—եղբայրներ կամ՝ ոչ եղբայրներ մէկ ընդանիքից—ընկերակցելով (ընալսա—ընկերակից) առնում են մի այլ ընդանիքից մի քանի աշխիներ, որոնք իրար մէջ լինում են քոյրեր կամ հօրեղբարց աշխիներ։ Այդ վերջինները դառնում են իրենց ընդհանուր ամուսինների ընդհանուր կանաչը լինչպէ գետնում ենք, արիւնակցութիւնը ամուսնացող զոյզերի մէջ միշտ աւելի և աւելի նւազում է։ Ընդանիքը միւղաւորում է. կազմում են զար-զար պունալրւա ընդանիքներ։ Այդ յսուածդիմութիւնը բացասրելու համար զանազան ենթադրութիւններ կարելի է անել։ Կարելի է ենթադրել, որ ընդանիքը չափազանց մեծանալով՝ հողը, բնակարեղը չի բաւել պէտք է եղել ցրելու. կարելի է ենթադրել դրա հետ միասին,—ինչ որ խիստ հաւանական է,—որ մորդիկ զգացել են մօր և որդու, եղբօր ու քրոջ սեռական յարաբերութիւնների վասակարութիւնը ֆիզիոգիական տիսակէտից։

## (Հարուսակելի)

ԾԱՆ. Վ. Ա. Ապիպակ. Մուբ. 1898 թ. № 10-11-ի մէջ, «Սոցիալական էւռութեցիա» տուածում, էջ 1525 «Նուն պեսիմիստական»... բառերով սկսող պարբերութիւնը պէտք է զետեղել էջ 1527 «անմոռութիւնն ու ունակութիւնը» բառերից լեռով—էջ 1526-ի սկզբում «Աւրելը»։ և այն երկոր պարբերութիւնը պիտի զետեղել էջ 1527 «Եւ ինչու չե» բառերից առաջ—էջ 1525 որոշ 4-րդ բիոլոգիական-ը ուշներ՝ թէօլոգիական։